

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ԿԵՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

338.14

4-90

ՊԵՏՏՐԱՏ

ՑԵՐԵՎԱՆ ▲ 1937

338.17

4-90

առ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՂՈՐ ԹԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

## ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ԿԵՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16 JUL 2013

29.986

07 FEB 2010

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ՀՈՂԵՐԸ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարներին Խորհուրդը վերոշում են.

1. Արգելել գյուղատնտեսական նշանակութիւն ունեցող հողերը կապալով տալը, ինչպես քաղաքի սահմանագծից դուրս, նույնպես և նրա սահմաններում:

2. Գյուղատնտեսական նշանակութիւն ունեցող ազատ հողերը հողային որդանների և քաղխորհուրդների կողմից տրամադրվում են հիմնարկութիւններին, կազմակերպութիւններին և առանձին քաղաքացիներին՝ միայն անվճար ոգտագործման համար:

Նշված հողերի ոգտագործման կարգը սահմանում են հողը հանձնող որդանները:

3. Արգելել պետական հիմնարկութիւններին և ձեռնարկութիւններին, վերոնց հատուկ նպատակների համար հող եւ տրամադրված (Ճանապարհային Հաղորդակցութեան Ժողովրդական Կոմիսարիատի սխտեմին, Ջրային Տրանսպորտի Ժողովրդական Կոմիսարիատին, Պաշտպանութեան Ժողովրդական Կոմիսարիատին և ուրիշներին) նրանց կողմից չոգտագործված հողը գյուղատնտեսական նպատակների համար կապալով տալը:

Այդ հողերը գյուղատնտեսական ոգտագործման նպատակով կարող են տրվել ուրիշ հիմնարկութիւններին և կազմակերպութիւններին, ինչպես նաև առանձին քաղաքացիներին՝ միայն անվճար, համաձայնեցնելով համապատասխան հողային որդանների կամ քաղխորհուրդներին հետ:

4. Մինչև որս գյուղատնտեսական ոգտագործման նպատակով տրված հողերից վորևե ձեռով կապալավարձ դանձելը, սույն վերոշման հրապարակվելուց հետո, դադարեցվում ե:

5. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. փետրվարի 13-ին N 200, «Մերձ քաղաքային տնտեսութիւնների կողմից քաղաքների և ավանների սահմանագծերում գտնվող հողերի ոգտագործման համար կապալավարձ տալու մասին» վերոշումը համարել իր ուժը կորցրած:



2757  
40

6. Առաջարկել դաշնակից հանրապետութիւններէ կառավարութիւններին իրենց որոշուած իշխանութիւնը համապատասխանեցնել սույն վարչման հետ:

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գաղափար՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովուրդների Գաղափար՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԲՆԱԿԵԼԻ  
ՇԵՆՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) Բնակելի շէնքերի նկատմամբ քաղաքացիների իրավունքների վերաբերյալ հարցի առթիվ խստորեն դեկլարովել ԽՍՀՄ սահմանադրութիւն 10-րդ հոդովածով:

2) Այն բանվորները և ծառայողները, վորոնք փոխում են իրենց աշխատանքի վայրը և փոստորեն ոգտագործում են տնամերձ հողամասերն իրենց ընտանիքի ուժերով, տնամերձ հողամասերն ոգտագործելու իրավունքը գյուղական վայրերում չեն կորցնում:

3) Այն բանվորները և ծառայողները, վորոնք իրենց ընտանիքներով տեղափոխվում են իրենց աշխատանքի վայրը և չեն մշակում ու չեն ոգտագործում տնամերձ հողամասերը, նրանց տնամերձ հողամասերը նախկին ոգտագործողներից ժամանակավորապես վերցվում են և հանձնվում այլ կոլտնտեսականների:

Յեթի գյուղից բացակայող բանվորի կամ ծառայողի ընտանիքը յերեք տարվա ընթացքում չի վերադառնում նախկին բնակութեան վայրը, ապա նրա տնամերձ հողամասը հանձնվում և նոր ոգտագործողին՝ մշտապես ոգտագործելու համար:

Բանվորների և ծառայողների կողմից չոգտագործվող տնամերձ հողամասերը ժամանակավորապես հանձնելու վերաբերյալ վորոշումը կայացնում և գյուղական խորհուրդը, իսկ այդ հողամասերը մշտապես այլ ոգտագործողների հանձնելու վորոշումն ընդունում և շրջանային գործադիր կոմիտեն, գյուղխորհուրդների առաջադրանքների հիման վրա:

Այս դեպքում գյուղխորհուրդը կամ շրջանային գործադիր կոմիտեն անպայման զրավոր կերպով հաղորդում են բանվորի և ծառայողի ընտանիքին նրանց տնամերձ հողամասը ժամանակավորապես կամ մշտապես այլ ոգտագործողի հանձնելու մասին:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

20/7 1937 թ.

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ 1935 թ. ՄԱՅԻՍԻ 8-Ի  
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ԳԼԽԻ 4-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՍՀՄ Հողօգտագործող պարզաբանում և, վոր կոլտնտեսութեան ձիւրով կոլտնտեսականների անձնական կարիքները սպասարկելու համար վարձ վերցվում և այն դեպքում, յերեք ձիւն տրվում և կոլտնտեսականներին շուկա գնալու, հյուր գնալու, և այն ժամանակ, յերեք նույնպես ձիւն ոգտագործվում և կոլտնտեսականի տնամերձ հողամասը մշակելու համար:

Մնացած դեպքերում, ինչպես, որինակ, հիվանդանոց գնալու, անտառից փայտ փոխադրելու համար կոլտնտեսականին ձիւն տրվում և անվճար:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ 1935 թ. ՄԱՅԻՍԻ 26-Ի  
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Տեղերից յեղած հարցումների կապակցութեամբ, ԽՍՀՄ Հողօգտագործող պարզաբանում և, վոր կոլտնտեսութեանները պարտավոր են կոլտնտեսականներին անվճար տրամադրել փոխադրական միջոցներ՝ կոլտնտեսականների կողմից պարտադիր մատակարարման և կոնտրակտացիոն կարգով պետութեանը հանձնվող գյուղատնտեսական մթերքները (կարտոֆիլ, միս, յուղ, բանջարեղեն և այլն) մթերման կայանները փոխադրելու համար:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ  
ՅԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՔԸ  
ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրութեանը, իր 14-րդ կետի համաձայն, արտելի վարչութեաններին պարտավորեցնում և ճաշատեղ կանանց աշխատանքից ծննդաբերութեանից մի ամիս առաջ և ծննդաբերութեանից մի ամիս հետո, պահպանելով այդ յերկու ամսվա համար նրանց հասանելիքը՝ նրանց աշխուրների միջին վատակի կեսի չափա:

Տեղերից ստացվող այն հարցումների կապակցութեամբ, թե այդ-

պիսի ղեկավարում ինչպես պետք է հաշվել աշխուրհի միջին վաստակը, ԽՍՀՄ-ի Հողօգտագործության պարզաբանում է, վոր աշխուրհի միջին վաստակը վորոշելու համար պետք է վերցնել նախքան ծննդաբերութեան պատճառով աշխատանքից ազատվելը՝ մեկ տարվա ընթացքում կոլտնտեսուհու վաստակած աշխուրհի ընդհանուր քանակի մեկ տասներկույերորդ մասը: Որինակ՝ կոլտնտեսուհին առաջիկա ծննդաբերութեան պատճառով ազատվում է աշխատանքից յերկու ամսով՝ 1935 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը: Այդ կոլտնտեսուհին 1934 թվականի մայիսի 1-ից մինչև 1935 թվականի մայիսի 1-ը ընկած ժամանակամիջոցում վաստակել է 240 աշխուր, այսինքն՝ միջին հաշվով նա մեկ ամսում վաստակել է 20 աշխուր: Ծննդաբերութեան պատճառով տրված արձակուրդի ժամանակամիջոցի, այսինքն՝ մայիս և հունիս ամիսների համար, նրա հասանելիքը տրվում է իր աշխուրհի միջին վաստակի կիսով չափ, նշանակում է՝ յուրաքանչյուր ամսվա համար 10-ական աշխուր, իսկ ընդամենը 20 աշխուր:

1935 թ. ապրիլի 9

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՍ

Հաստատված է ԽՍՀՄ ԺԿԽ-ի կողմից  
1937 թ. հունիսի 10-ին:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՍԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Բոլոր հանրապետական հողօգտագործատներին, յերկրային (մարդային) հողաօժիտներին և ԽՍՀՄ Հողօգտագործատի գլխավոր վարչությանը:

Կոլտնտեսուհի տրակտորիստներին ծննդաբերութեանից առաջ և հետո աշխատանքից ազատելու ժամանակաշրջանում աշխուրհի գրանցելու մասին:

1. Սահմանել, վոր ՄՏԿ-ների կոլտնտեսուհի տրակտորիստները յերկու ամիս ծննդաբերութեանից առաջ պետք է ազատվեն տրակտորի վրա աշխատելուց և փոխադրվեն կոլտնտեսութեան թեթև աշխատանքի:

Կոլտնտեսուհի տրակտորիստներին ծննդաբերութեանից հետո տրակտորի վրա աշխատել թույլատրվում է միմիայն յերկու ամիս անցնելուց հետո:

2. Հղի տրակտորիստուհիները թեթև աշխատանքներ կատարելու գիմաց աշխուրհի են ստանում կոլտնտեսութեանում տվյալ աշխատանքի համար սահմանված գնահատումներով:

Կոլտնտեսուհի տրակտորիստները աշխատանքից յերկու ամիս լրիվ չափով ազատված ժամանակամիջոցի համար աշխուր են ստանում՝ աշխատանքից ազատվելուց առաջ 12 ամսվա ընթացքում յերեկու վաստակած աշխուրհի ընդհանուր թվի մեկ տասներկույերորդականի չափով:

Աշխուրհը գրանցում են այն կոլտնտեսութեանները, վորոնց դաշտերում աշխատել է կոլտնտեսուհի տրակտորիստը, արձակուրդին նախորդող 12 ամսվա ընթացքում նրա վաստակած աշխուրհի համեմատ:

3. Կոլտնտեսուհի տրակտորիստներին արձակուրդի ժամանակամիջոցի համար համեմատ հացահատիկ և դրամ կոլտնտեսութեանները տալիս են ՄՏԿ-ներին՝ գրանցված աշխուրհի համեմատ և աշխուրի լրիվ արժեքի չափով, բայց վոչ պակաս քան 2 ռ. 50. կ. դրամ և յերեք կիլոգրամ հացահատիկ յուրաքանչյուր աշխուրի դիմաց:

Կոլտնտեսուհի տրակտորիստների հետ դրամով և հացահատիկով հաշիվ է տեսնում ՄՏԿ-ն:

Արձակուրդի ժամանակամիջոցի ընթացքում կոլտնտեսուհի տրակտորիստների աշխուրհին հասանելիք մյուս բոլոր մթերքները նրանք ստանում են այն կոլտնտեսութեանից, վորի անդամ են հանդիսանում յերեքը, այն հաշվով, վոր յերեք կոլտնտեսութեանը մյուս կոլտնտեսութեանների հետ, վորոնց դաշտերում աշխատել է կոլտնտեսուհի տրակտորիստը, հաշիվները փակեն:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՍ

ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՄՍՍԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ  
ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄՈՍԿՎԱ, 5—Նկատի առնելով մի շարք յերկրներից ու մարզերից ստացված հարցապնդումները՝ կոլտնտեսութեաններում յեկամուտները բաշխելու տիպային ձևի մասին, հայտարարվում է, վոր յեկամուտները պետք է բաշխվեն խստորեն համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան:

Այն կոլտնտեսութեանները, վորոնք կատարել են հացահատիկ հանձնելու և պարենային ու սերմային վարիլը վերադարձնելու պարտավորութեանները, հանձնել են ՄՏԿ-ների աշխատանքի համար հասանելիք բնավարձը, ինչպես և կազմել են սերմի, կերի ու ապահովագրական ֆոնդերը և առանձնացրել են մթերքների մի մասը՝ պետութեանը կամ շուկայում վաճառելու համար, — հացահատիկը բաշխում են ըստ աշխուրհի:

Նմանապես՝ կոնտրակտացիոն պայմանագրերի համաձայն, գետ-

նախնձորի պարտադիր հանձնումը կատարելուց և բնավարձը մուծե-  
լուց հետո, կատարում են գետնախնձորի բաշխումը և բանջարեղենը  
հանձնելու պարտավորությունները կատարելուց հետո՝ բանջարեղենի  
բաշխումը:

Փողային յեկամտի վերջնական բաշխումը կատարվում է կո-  
տնտեսությունների տարեկան հաշվետվությունը կազմելուց հետո:

Հաշվետվության այն ձևերը, վորոնք գոյություն ունեն կոլտն-  
տեսություններում, ապահովում են յեկամուտների թե նախուրալ և  
թե փողային մասի ճիշտ բաշխումը: Ուստի ԽՍՀՄ-ի Հողփողկոմատն  
ալիելորդ և համարում լրացուցիչ ձևեր սահմանել յեկամուտները բաշ-  
խելու համար:

5/10 1937 թ.

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

### ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Խոտի բերքահավաքի աշխատանքները հաջող անցկացնելու, կո-  
տնտեսությունների համայնացված անասուններն ու կոլտնտեսական-  
ների անձնական ոգտագործման տակ յեղած անասունները խոտով  
լրիվ ապահովելու նպատակով՝

1. Հանձնարարել կոլտնտեսություններին՝ խոտի բերքահավաքի  
ընթացքում կոլտնտեսականներին տալ մթերային տվանս՝ խոտով,  
միաժամանակ պետությունը կոտորակապի համաձայն խոտը հանձ-  
նելով և կոլտնտեսության համայնացված անասունները խոտով ապա-  
հովելով:

2. Սահմանել, վոր մթերային տվանս խոտով տրվում է կոլտն-  
տեսականներին նրանց աշխատած աշխորերի համաձայն՝ հնձած և հա-  
վաքած ամբողջ խոտի աւաջին հնձի 15-20%-ի և յերկրորդ հնձի  
25-35%-ի չափով:

3. Սահմանել, վոր կոլտնտեսականների հետ վերջնական հաշվարկ  
ըստ աշխորերի կատարվելու յե կոլխոզի կոտորակապիտն պլանը կա-  
տարելուց և կոլտնտեսության ապրանքային ֆերմաների և ձիերի  
համար անհրաժեշտ պաշար ստեղծելուց հետո:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

9/7 1937 թ.

Հաստատված է Համամիութ. ՀժԿ-ի

կողմից 1937 թ. ագոստոսի 13-ին

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ

ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀժԿ-Ի ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակից հանրապետությունների Հողփողկոմատների, Յերկրա-  
յին և Մարդային Հողային վարչպետների հարցումների կապակցու-  
թյամբ, գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության  
11-րդ հոդվածի «գ» կետում նախատեսված հաշմանդամների, ծերե-  
րի, կարմիր բանակայինների ընտանիքներին և այլն ոգնելու համար  
բամբակացան, ծխախոտագործական և պողպաղեգործական կոլտնտե-  
սություններում ֆոնդ կազմակերպելու մասին: Համամիութենական  
ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԸ պարզաբանում է՝

Այն կոլտնտեսություններում, ուր հացահատիկային կուլտուրա-  
ներ չնչին քանակությամբ կան, հաշմանդամներին, ծերերին, աշխա-  
տունակությունը ժամանակավորապես կորցրածներին, կարմիր բանա-  
կայինների կարիքավոր ընտանիքավորներին, մանկամուրները պահ-  
պանելու և վորբերին ոգնելու ֆոնդը կոլտնտեսականների ընդհանուր  
ժողովի վորոշմամբ կարող է կազմակերպվել յե հաշիվ կոլտնտեսու-  
թյան դրամական յեկամուտների, վոր նա ստանում է բամբակ, ծխա-  
խոտ և այլ մթերքներ պետությունը վաճառելուց: Այդ ֆոնդը չպետք  
է գերազանցի կոլտնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքի  
2%-ից:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

### ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ԽՍՀՄ Հողփողկոմատը պարզաբանում է, վոր կոլտնտեսային ար-  
տադրանքը շուկաներում վաճառելու ասպարեզում մասնավոր անձանց  
ներգրավելը հակասում է գյուղատնտեսական արտելի որինակելի  
կանոնադրությանը: Կանոնադրության համաձայն կոլտնտեսության  
մեջ բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնա-  
կան աշխատանքով: Կոլտնտեսությունները կարող են ներգրավել, վոր-  
պես վարձով աշխատողների, միայն մասնագետներին (ագրոնոմներին,  
հաշվետարներին), կամ թե ժամանակավոր բանվորների՝ գյուղատնտե-  
սական ու շինարարական աշխատանքների համար, բայց վոր մթերք  
վաճառողներին:

Կոլտնտեսային խանութներում, վրաններում ու կրպակներում մասնավոր անձանց աշխատանքի մեջ ներգրավելն անթույլատրելի չե այն պատճառով վոր նրանք կարող են կոլտնտեսութեան ֆերման ոգտագործել սպեկուլյատիվ նպատակներով:

Այն դեպքում, յերբ կոլտնտեսութեանը չի կարող իր անդամներին առանձնացնել կոլտնտեսային արտադրանքը շուկայում վաճառելու համար, նա կարող է այդ արտադրանքի իրացումը հանձնել կոոպերացիային և պետականորին:

## ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ ԿՈՄԲՍՅՆԱՎԱՐՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ  
1935 թ. ԱՊՐԻԼԻ 19-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

### ԿՈՄԲՍՅՆԱՎԱՐՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ա) Կոմբայնավարների վարձատրման բնագավառում հացահատիկային խորհրտնտեսութեաններում գոյութեան ունեցող վարձատրման պրակտիկան, վորպես սխալ և լողերներին խրախուսող, վերացնել:

բ) Սահմանել, վոր բերքահավաքի ժամանակ կոմբայնավարին աշխատավարձ է տրվում միմիայն իր հավաքած բերքի հեկտարներին քանակի համեմատ, իսկ ամեն տեսակ պարագուրդները և բերքահավաքի ժամանակ կատարած նորոգումը չի վարձատրվում:

10. 1935 թ. բերքահավաքի սեզոնի համար սահմանել մի կոմբայնի արտադրանքի հետեյալ նորմաները՝

ա) Արտադրանքի որական նորման՝ 7 հեկտար 15 վոտնաչափի կոմբայնի համար, 8 հեկտար՝ 20 վոտնաչափի կոմբայնի համար:

բ) Արտադրանքի սեզոնային նորման՝ 160 հեկտար 15 վոտնաչափի կոմբայնի համար և 180 հեկտար՝ 20 վոտնաչափի կոմբայնի համար:

11. 15 վոտնաչափի կոմբայնի վրա («Կոմոնար», Սարատովի կոմբայն) աշխատողի համար սահմանել վարձատրութեան և պարգեւատրումների հետեյալ չափերը,

ա) Որական մինչև 7 հեկտար բերք հավաքող կոմբայնավարն ստանում է 2 ռ. 50 կ. իր հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար:

բ) Որական 7 հեկտարից ավելի բերք հավաքող կոմբայնավարը, բացի իր հիմնական աշխատավարձից, լրացուցիչ կերպով ստանում է 1 ռ. 50 կ. պարգև-հավելում, 7 հեկտարից ավելի իր հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար:

գ) Բերքահավաքի սեզոնում 160 հեկտարից ավելի բերք հավաքող կոմբայնավարն այդ 160 հեկտարից ավելի հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար ստանում է 2 ռ. պարգև-հավելում, յեթե այդ 160 հեկտարը հավաքել է որացուցային 30 որից պակաս ժամկետում, իսկ 160 հեկ ավելի իր հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար ստանում է 1 ռ. 50 կ., յեթե այդ 160 հեկ. բերքահավաքը ձգձգվել է 30 որ և ավելի:

դ) 1935 թ. բերքահավաքի սեզոնում 160 հեկտարից ավելի բերք հավաքող կոմբայնավարը, բերքահավաքի վորակը լավ լինելու դեպքում, բացի դրանից, պարգև է ստանում նաև 10 փութ հացահատիկ բնամթերք՝ առանց արժեքը վճարելու:

յե) 300 հեկտարից ավելի բերք հավաքող կոմբայնավարը, բերքահավաքի վորակը լավ լինելու դեպքում, վորպես լրացուցիչ պարգև ստանում է, առանց արժեքը վճարելու, 15 փութ հացահատիկ, իսկ ընդամենը՝ 25 փութ հացահատիկ:

12. 20 վոտնաչափի կոմբայնի վրա («Ռոստ Սելմաշ» գործարանի կոմբայնը, «ՄՏԱԼԻՆՆՅՑ» կոմբայնը) աշխատող կոմբայնավարներին համար սահմանել վարձատրութեան ու պարգևատրման հետեյալ չափերը՝

ա) Որական մինչև 8 հեկտար բերք հավաքող կոմբայնավարն ստանում է 2 ռ. 50 կ. իր հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար:

բ) Որական 8 հեկտարից ավելի հավաքող կոմբայնավարն 8 հեկտարից ավելի իր հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար, բացի իր հիմնական գործավարձից, լրացուցիչ կերպով ստանում է 1 ռ. 50 կ. պարգև-հավելում:

գ) Բերքահավաքի սեզոնում 180 հեկտարից ավելի բերք հավաքող կոմբայնավարը, այդ 180 հեկտարից ավելի հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար ստանում է 2 ռ., յեթե այդ 180 հեկ. հավաքել է որացուցային 30 որից պակաս ժամկետում, իսկ 180 հեկտարից ավելի հավաքած յուրաքանչյուր հեկտարի համար՝ 1 ռ. 50., յեթե 180 հեկտարի բերքահավաքը ձգձգվել է 30 որ և ավելի:

դ) 1935 թ. բերքահավաքի սեզոնում 180 հեկտարից ավելի հավաքող կոմբայնավարը, բերքահավաքի վորակը լավ լինելու դեպքում,

բացի դրանից, ստանում և առանց արժեքը վճարելու 10 փութ հացահատիկ բնամթերքով:

յե) 340 հեկտարից ավելի հավաքող կոմբայնավարը, բերքահավաքի վորակը լավ լինելու դեպքում, վորպես լրացուցիչ պարգև ստանում և, առանց արժեքը վճարելու, 15 փութ հացահատիկ, իսկ ընդամենը՝ 25 փութ հացահատիկ:

13) Բերքահավաքի ժամանակ կոմբայնավարներին աշխատավարձ և տրվում լինի պակաս քան 5 որը մեկ անգամ:

14) Սահմանել, վոր կոմբայնավարը հանդիսանում և ազրեգատի (կոմբայնի ու տրակտորը) պետք և նրան յենթարկվում են տվյալ ազրեգատի վրա աշխատող բոլոր անձինք (կոմբայնավարի ոգնականը և տրակտորիստը):

Սահմանել, վոր յերկու կոմբայն մեկ տրակտորի կցելու դեպքում խորհրդատեսության դիրեկտորը կոմբայնավարներից լավագույնին նշանակում և ազրեգատի պետ:

15) Սահմանել, վոր խորհրդատեսություններում կոմբայն աշխատելիս, կոմբայնավարի ոգնականի և տրակտորիստի ստացած աշխատավարձը պետք և կախված լինի կոմբայնավարի աշխատավարձից, այն և՛ կոմբայնավարի ոգնականն ստանում և կոմբայնավարի աշխատավարձի 60%-ի չափով, տնվավոր տրակտորի տրակտորիստը՝ կոմբայնավարի աշխատավարձի 70%-ի չափով, և թրթուրավոր տրակտորի արակտորիստը՝ կոմբայնավարի աշխատավարձի 85%-ի չափով:

16) Սահմանել, վոր կոմբայնավարը հանդիսանում և խորհրդատեսության ու ՄՏԿ-ի մշտական հաստիքային աշխատողը և բերքահավաքից դուրս մնացած ամբողջ ժամանակը նա պետք և ոգտագործվի կամ վորպես տրակտորիստ, կամ վորպես տրակտորային բրիգադավար, կամ վորպես նորոգող բանվոր, կամ պետք և ոգտագործվի մեքենաների մյուս աշխատանքներում. նրա վարձատրությունը, նայած տրտադրանքին, պետք և լինի 200 240 ո. ամսական:

17) ՄՏԿ-ներում, վորպես տրակտորիստ աշխատող կոմբայնավարներին թույլ տալ, բերքահավաքից առաջ և հետո, տրակտորների վրա կատարած իրենց աշխատանքի համար սահմանված դրամական աշխատավարձի փոխարեն, աշխատավարձ ստանալ ըստ աշխուրների՝ մյուս տրակտորիստների հետ ընդհանուր հիմունքներով:

18) Պարտնեցություն և դատնթացներում սովորող կոմբայնավարների համար թոշակ սահմանել ամսական 150 ո., իսկ կոմբայնավարների ոգնականների համար՝ 80 ո.:

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմը պարտավորեցնում են՝ բոլոր յերկրային (մարզային) գործկոմներին և յերկր-

կոմներին (մարզկոմներին), հանրապետությունների Ժողկոմխորհներին, ազգային կոմկուսների կենտկոմներին, ԽՍՀՄ-ի ՀոգԺողկոմատին և Խորհանտ. Ժողկոմատին՝ անպայման ապահովել այս վորոշման լրիվ ու ճշտիվ կատարումը:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ ՀԱՄ Կ (բ) Կ Կենտկոմական  
Վ. ՄՈԼՈՏՈՎ Կոմիտեյի ֆարսուդար՝  
Ի. ՍՍԱԼԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄՄԽՈՐՀԻ 1937 Թ. ՄԱՅԻՍԻ 26-Ի  
№ 845 ՎՈՐՈՇՈՒՄԸ «ԿՈՄԲԱՅՆՆԵՐՈՎ ԲԵՐՔԱՎԱՎԱՔԻ»  
ՄԱՍԻՆ

### ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄՄԽՈՐՀԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե՝

ի փոփոխումն ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937թ. հունվարի 5-ի 13 վորոշման 3-րդ գլ. 21-րդ հոդվածի՝ սահմանել.

1. 15 վոտնաչափի կոմբայնի սեզոնի արտադրանքի նորման՝ 180 հեկտար, և 20 վոտնաչափի կոմբայնինը՝ 200 հեկտար, ու համապատասխանորեն սահմանել որական արտադրանքի նորմա 8 հեկտար՝ 15 վոտնաչափի, և 9 հեկտար՝ 20 վոտնաչափի կոմբայնի համար:

2. Հասկավորները կոմբայնով բերքահավաքի պլանը Ուկրայնական ԽՍՀ ում սահմանել 6600 հազար հեկտար:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ ՄՈԼՈՏՈՎ  
ԽՍՀՄ Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ ԱՐԲՈՒՋՈՎ

ԲՈԼՈՐ ՀԱՆՐ. ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏՆԵՐԻՆ, ՅԵՐԿՐԱՅԻՆ  
ՄԱՐՋԱՅԻՆ ՀՈՂԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏԻ  
ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ուղարկում եմ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թ. մայիսի 26-ի վորոշումը՝ կոմբայնավարների սեզոնային և որական արտադրանքի նորմաները փոփոխելու վերաբերյալ:

1937 թվին կոմբայնավարներին պարգև-հավելումները պետք և վճարվեն ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թ. մայիսի 26-ի վորոշումով սահմանված որական և սեզոնային նոր նորմաները կատարելուց հետո:

Սույն վորոշումը շտապ հասցրեք մինչև բոլոր ՄՏԿ-ները և կոմբայնավարները:

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐՆԵՐԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ  
ՏՐԱԿՏՈՐԻՍՏՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ՝  
ԲԵՐՔԸ ԿՈՄԲԱՅՆՈՎ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԲՈՒՄՏԻ 1935 Թ. ՀՈՒՆԻՍԻ 10-Ի  
№ 4034 ՎՈՐՈՇՈՒՄԸ

1935 թ. բերքահավաքի սեզոնին, բերքը կոմբայնով հավաքելու ղեկավարում, կոմբայնավարների ոգնականների և տրակտորիստների վարձատրման հետևյալ կարգը սահմանել.

1. ՄՏԿ-ներում կոմբայնավարի ոգնականը կոմբայնի որական նորման կատարելիս (15 վոտնաչափի կոմբայնի համար՝ 7 հեկտար, 20 վոտնաչափի համար՝ 8 հեկտար) յուրաքանչյուր հնձած հեկտարի համար ստանում է 0,45 աշխուր:

2. Տրակտորիստը, վորն աշխատում է կոմբայնի հետ անվավոր տրակտորի վրա, վեշը նշված որական նորմաների ղեկավարում յուրաքանչյուր հնձած հեկտարի համար ստանում է 0,50 աշխուր:

3. Տրակտորիստը, վորն աշխատում է կոմբայնի հետ թրթուրավոր տրակտորի վրա, վերը նշված նորմաների ղեկավարում, յուրաքանչյուր հնձած հեկտարի համար ստանում է 0,55 աշխուր:

4. Սահմանված արտադրանքի նորմայից ավելի հնձած յուրաքանչյուր հեկտարի համար կոմբայնավարի ոգնականին և տրակտորիստին, բացի հիմնական վարձատրությունից լրացուցիչ կերպով տրվում է 0,1 աշխուր:

5. Պարտավորեցնել յերկրային և մարզային հողվարչպետերին՝ կոմբայնավարների ոգնականների և տրակտորիստների վարձատրման սույն կարգը հետադրով հասցնել յուրաքանչյուր ՄՏԿ:

ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱԼԻ ՄՅՈՒՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ  
ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-Ի ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՄ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ  
1935 Թ. ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Սահմանել վարձատրման ու պարգևի հետևյալ չափերը Մ. Կ. 1100 կալիչների վրա աշխատող մեքենավարների համար.

ա) Այն մեքենավարը, վորն ամբողջ որվա ընթացքում կալսել է մինչև 10 տոնն, ՄՏԿ-ից կամ խորհրտեսուլթյունից իր կալսած յուրաքանչյուր տոնն հացահատիկի համար ստանում է մեկական ուղբի փող և 600 գրամ հացահատիկ՝ անվճար:

բ) Այն մեքենավարը, վորն ամբողջ որվա ընթացքում կալսել է 10 տոննից ավելի, 10-ից ավելի իր կալսած յուրաքանչյուր տոննի համար ստանում է պարգև-հավելում 50 կ. փողով և անվճար 250 գրամ հացահատիկ՝ վորպես լրացում իր հիմնական գործավարձի:

գ) Այն մեքենավարը, վորը կալի ամբողջ սեզոնի ընթացքում կալսել է 400 տոննից ավելի, ստանում է լրացուցիչ պարգև-հավելում 50 կ. փողով և անվճար 250 գրամ հացահատիկ՝ 400-ից ավելի իր կալսած յուրաքանչյուր տոննի համար, յեթե այդ 400 տոննը նա կալսել է որացուցային 60 որից պակաս ժամանակամիջոցում:

2) Սահմանել վարձատրման և պարգևների հետևյալ չափերը ԲՈ 900 և ԲԴՈ 34 կալիչների վրա աշխատող մեքենավարների համար.

ա) Այն մեքենավարը, վորն ամբողջ որվա ընթացքում կալսել է մինչև 6 տոնն, իր կալսած հացահատիկի յուրաքանչյուր տոննի համար ՄՏԿ-ից կամ խորհրտեսուլթյունից ստանում է 1 ու. 30 կ. փող և 600-ական գրամ հացահատիկ՝ անվճար:

բ) Այն մեքենավարը, վորն ամբողջ որվա ընթացքում կալսել է 6 տոննից ավելի, ստանում է 6 տոննից ավելի կալսած յուրաքանչյուր տոննի համար 65 կ. փողով և 250 գրամ հացահատիկ՝ անվճար պարգև-հավելում, վորպես լրացում իր հիմնական գործավարձի:

գ) Այն մեքենավարը, վորը կալի ամբողջ սեզոնում կալսել է 250 տոննից ավելի, ստանում է 65 կ. փողով և 250 գրամ հացահատիկ՝ անվճար պարգև-հավելում 250-ից ավելի իր կալսած յուրաքանչյուր տոնն հացահատիկի համար, յեթե այդ 250 տոննը նա կալսել է որացուցային 60 որից պակաս ժամանակամիջոցում:

3) Բացի դրանից, առանց կորստի կալսելու, հացահատիկի կալսման լավ արդյունք տալու և լավ մաքրելու համար մեքենավարը հասուկ պարգև է ստանում հետևյալ չափով.

ա) ՄՏԿ-ի մեքենավարն իր սպասարկած կոլտնտեսությունից տասը հարյուրերորդական աշխուր իր կալսած յուրաքանչյուր տոննի համար:

բ) Խորհրտեսուլթյան մեքենավարը խորհրտեսուլթյունից՝ ընդամենը 100 ու. փողով, կալը վերջանալուց հետո:

4) Սահմանել, վոր կալիչի վրա մեքենավարը հանդիսանում է կալիչ ագրեգատի պետը, և նրան հն յինթարկվում կալիչի ու շարժիչի բոլոր աշխատողները:

5) ՄՏԿ-ի կալիչների վրա աշխատող կոլտնտեսի համար վարձատրություն սահմանել ՄՏԿ-ից ամսական 200 ու. և բացի դրանից, ամսական 100 ու. փողով և 40 կգ. պարգև հացահատիկով՝ կալսած ամբողջ հացահատիկը կանոնավորելու լրիվ կշռելու ղեկավարում:

5) Պարտավորեցնել ՄՏԿ-ի ու խորհրդատեսությունների դիրեկտորներին՝ մեքենավարներին և կոռուկներին աշխատավարձ վճարել ամսական յերկու անգամ, ամսի 5-ին և 20-ին:

7) Առաջարկել կոլտնտեսություններին՝ կալի վրա աշխատող կոլտնտեսականներին, ինչպես և կալի վրա աշխատող տրակտորիստներին ու մոտորիստներին, յուրաքանչյուր տոնն կալված հացահատիկի համար վարձատրություն սահմանել ութ հարյուրերորդականից մինչև քսաներկու հարյուրերորդական աշխոր՝ նայած աշխատողի վարակին ու աշխատանքի զգուշությանը: Այդ թվից քսաներկու հարյուրերորդական աշխոր սահմանել կալիչին սպասարկող տրակտորի տրակտորիստին, կալիչին սպասարկող նավթային շարժիչի մոտորիստին և լժմուկի մեջ հացաբույս նետող թմբուկավարին:

Հանձնարարել կոլտնտեսություններին, կալիչի որակաւն արտադրանքի նորման գերակատարելու դեպքում, կալիչի վրա աշխատող կոլտնտեսականներին պարգև տալ նրանց զործավարձի արժեքի 50%-ի չափով:

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համ. Կ(բ)Կ Կենտկոմն առաջարկում են՝ խորհրդային ու կուսակցական բոլոր կազմակերպություններին և խորհրդատեսությունների դիրեկտորներին՝ սույն վորոշման հիման վրա ապահովել կալիչների աշխատանքի իրական բարելավումը:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ ՀԱՄ. Կ(բ)Կ Կենտկոմի  
Վ. ՄՈՒՈՏՈՎ, ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի. ՍՏԱՆԻՆ

### ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Հողորդանքները տեղերում սահմանել են սխիսային կերերը կոլխոզներում ոգտագործելու պրակտիկան՝ բացառապես համայնացված հոտին կերակրելու համար: Վերադառնալով, կոլտնտեսականների անձնական ոգտագործման տակ յեղած անասունների կերակրելու համար սխիս չի տրվում:

Համարելով այս պրակտիկան վնասակար՝ անասնապահության զարգացման համար, ԽՍՀՄ Հողժողկոմատը հանձնարարում է բոլոր կոլտնտեսություններին, աշխորների դիմաց սխիսացված կեր տալ ոգտագործելով դրա համար սխիսացված ամբողջ կերի 20—30%-ը:

Կոլտնտեսականների անձնական ոգտագործման անասունների համար սխիս պետք է տալ՝ համայնացված անասուններին կերակրելու համար սխիսացված կեր տալով հանգերձ:

Սխիսը պետք է դնել այն հաշվով, վոր հյուլթալի կերով ապահովված լինի վոչ միայն կոլտնտեսության համայնացված հոտը, այլև կոլտնտեսականի անձնական ոգտագործման համար յեղած անասունները:

## ՄՍԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՑԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Միության Ժողկոմխորհը վորոշեց 1937 և 1938 թվականների համար պահպանել միս հանձնելու ասպարեզում տրվող հետևյալ արտոնությունները:

1. Պետությանը միս և կաթ մատակարարելուց յերկու տարի ժամանակով ազատել այն կոլտնտեսականներին, վորոնք իրենց տնտեսություններում անցրել են կով կամ հորթ և վաճառել են դրանք կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին պետական գնով, ինչպես և ազատել այն մենատնտեսներին, վորոնք կոլտնտեսություն են մտել և վաճառել են կովը կամ հորթը կոլտնտեսային ապրանքային ֆերմային՝ պետական գնով:

2. Ազատել կոլտնտեսությունները պետությանը պարտադիր կարգով միս մատակարարելուց այն խոշոր յեղջուրավոր անասուններից, խոզերից ու վոչխարներից, վորոնք մտցված են միասնական պետական ցեղամատյանում, ինչպես և ազատել առանձին կոլտնտեսականների տնտեսությունները, պայմանով, վոր կոլտնտեսականը պետությանը վաճառի միասնական պետական ցեղամատյանում գրանցված անասունի սերունդը:

3. Այն կոլտնտեսականներին և մենատնտեսներին, վորոնք կովազուրկ կոլտնտեսականներին վաճառում և վաճառելու կոնտրակտ են կնքում, հորթը վաճառելուց հետո, 20 տոկոս զեղչել պետությանը պարտադիր կարգով միս մատակարարելու տարեկան պլանից:

4. Ազատել կոլտնտեսությունները պետությանը պարտադիր կարգով միս մատակարարելուց մերինոսյան, կարակուլյան և գրակի մորթի ունեցող վոչխարներից, ինչպես և կոլտնտեսություն մերի բանող յեղներից ու գոմեշներից:

Բացի դրանից, ԽՍՀ Միության Ժողկոմխորհը վորոշեց՝ սկսած 1937 թվականից, անասնաբուժական ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամների անձնական պարտավորությունների կատարման հաշվի մեջ մտցնել 25% այն մսի քանակից (կենդանի քաշով), վորը հանձնել են ֆերմաները խոզերով, և 20% այն մսի քանակից, վորը հանձնել են նրանք այլ տեսակ, անասուններով:



|                                                                                                                                                                                              |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1. Գյուղատնտեսական նշանակութիւն ունեցող հողերը կապա-<br>լով տալիս արգելելու մասին ԽՍՀՄ-ի Կենտրոնական և Ժող-<br>կամխորհի վորոշումը . . . . .                                                  | 3  |
| 2. ԽՍՀՄ Հողօգտագործման պարզաբանումը բնական շինքերի<br>նկատմամբ քաղաքացիների իրավունքների հարցի վերաբե-<br>րյալ . . . . .                                                                     | 4  |
| 3. ԽՍՀՄ Հողօգտագործման 1935 թ. մայիսի 8-ի պարզաբանումը<br>գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրութեան<br>3-րդ գլխի 4-րդ հոդվածի վերաբերյալ . . . . .                                     | 5  |
| 4. ԽՍՀՄ Հողօգտագործման 1935 թ. մայիսի 26-ի պարզաբանումը . . . . .                                                                                                                            | 5  |
| 5. Կոտնտեսութեան ծննդաբերութիւնից հետո յեղած Ժա-<br>մանակամիջոցի համար հասանելիքը հաշվելու կարգը. ԽՍՀՄ-ի<br>Հողօգտագործման պարզաբանումը . . . . .                                            | 5  |
| 6. ԽՍՀՄ Հողօգտագործման պարզաբանումը . . . . .                                                                                                                                                | 6  |
| 7. ԽՍՀՄ-ի Հողօգտագործման բացատրութիւնը կոտնտեսութիւն-<br>նի բնութեան յեղածութեանը բաշխելու մասին . . . . .                                                                                   | 7  |
| 8. ԽՍՀՄ Հողօգտագործման պարզաբանումը . . . . .                                                                                                                                                | 8  |
| 9. Գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրութեան<br>11-րդ հոդվածի «Գ» կետի կիրառման կարգի մասին. ԽՍՀՄ<br>Հողօգտագործման բացատրութիւնը . . . . .                                            | 9  |
| 10. ԽՍՀՄ Հողօգտագործման պարզաբանումը . . . . .                                                                                                                                               | 9  |
| 11. Խորհրդային կոտնտեսութեան և ՄՏԿ-ներում կոմբայնավարնե-<br>րին վարձատրելու կարգի մասին ԽՍՀՄ Ժողկոմխորհի և<br>Համ. Կ (բ) Կ Կենտկոմի վորոշումից . . . . .                                     | 10 |
| 12. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թ. մայիսի 26-ի № 845 վորոշու-<br>մը «կոմբայններով բերքահավաքի» մասին . . . . .                                                                                     | 13 |
| 13. ԽՍՀՄ Հողօգտագործման հրահանգը կոմբայնավարներին պարզե-<br>հաշիւով տալու մասին . . . . .                                                                                                    | 13 |
| 14. Կոմբայնավարների ոգնականների և տրակտորիստների վար-<br>ձատրման կարգի մասին՝ բերքը կոմբայնով հավաքելու դեպ-<br>քում, ԽՍՀՄ Հողօգտագործման 1935 թ. հունիսի 10-ի № 4034<br>վորոշումը . . . . . | 14 |

|                                                                                                                                                            |    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 15. Մեքենավարներին և կալի մյուս աշխատողներին վարձատ-<br>րելու մասին. ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ. Կ (բ) Կ<br>Կենտկոմի 1935 թ. հունիսի 2-ի վորոշումը . . . . . |    |
| 16. ԽՍՀՄ Հողօգտագործման պարզաբանումը . . . . .                                                                                                             | 16 |
| 17. Մսի հանձնման բնագավառում կոտնտեսութիւնների, կո-<br>տնտեսականների և մենատնտեսներին տրվող արտոնու-<br>թիւնների մասին . . . . .                           | 17 |



Կազմեց՝ Ս. ՄԻՋԻՖԵՐՉԵԱՆ

Պատ. խմբագիր՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սրբագրիչ՝ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ԱՎԱԳՅԱՆ

Գլավ՝ Լիտի լիազոր Կ 4680

Հրատ. 4345, պատվեր 879, տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 1937 թ. նոյեմբերի 11-ին

Ստորագրված է ապելու 1937 թվի նոյեմբերի 28 ին

Պետհրատի 2-րդ տպարան, Նալբանդյան, 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0209953

№ 80 419.

29 986

Постановления и пояснения  
некоторых пунктов  
примерного устава  
сельскохозяйственной артели  
ГИЗ АРМ. ССР